9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԷՔՍՏԵՌՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՔԻՄԻԱ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Սիրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:
Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն

1 **Ո՞րն է հետևյալ արտահայտության ճիշտ շարունակությունը.**

Մոլեկուլները ֆիզիկական երևույթների ընթացքում _____ :

1) փոփոխության չեն ենթարկվում
2) քայքայվում են
3) կիսվում են
4) փոխարկվում են այլ նյութերի

2 **Ո՞ր զույգում են միայն պարզ նյութերի անվանումներ.**

1) գրաֆիտ և սիլան
2) ծծումբ և ալմաստ
3) ալմաստ և ամոնիակ
4) ազոտ և մեթան

3 **Ո՞ր դեպքում է խոսվում քիմիական երևույթի մասին.**

1) ջուրը եռացնելիս նկատվում է գազի անջատում
2) նատրիումի նիտրատի տաքացման պայմաններում առաջանում է թթվածին
3) օծանելիքի տարան բացելիս հոտը տարածվում է սենյակում
4) ջրից սառույցի առաջացումը

4 **Ո՞ր խառնուրդը կարելի է բաժանել զտմամբ (ֆիլտրմամբ).**

1) կավի և ջրի խառնուրդը
2) շաքարավազի ջրային լուծույթը
3) ջրի և բենզինի խառնուրդը
4) էթիլ սպիրտի ջրային լուծույթը

5 **Որքա՞ն է գրաֆիտ, սիլան, կարբորունդ և ֆուլերեն նյութերը կազմող քիմիական տարրերի թիվը.**

1) մեկ
2) երկու
3) երեք
4) չորս

6 **Ո՞ր միացության հարաբերական մոլկուլային զանգվածն է հավասար նեոնի հարաբերական ատոմային զանգվածին.**

1) ջրի
2) ամոնիակի
3) մեթանի
4) ֆտորաջրածնի

7 **Բնության մեջ քիմիական տարրերը կարող են գտնվել՝**

1) միայն պարզ նյութերի բաղադրությունում
2) միայն բարդ նյութերի բաղադրությունում
3) միայն ազատ ատոմների տեսքով
4) ինչպես ազատ ատոմների, այնպես էլ պարզ և բարդ նյութերի բաղադրությունում

8 **Ի՞նչ է մոլը.**

1) մեկ մոլեկուլի զանգվածն է
2) $6{,}02\cdot10^{23}$մոլեկուլի զանգվածն է
3) նյութի զանգվածի հարաբերությունն է քիմիական քանակին
4) $6{,}02\cdot10^{23}$ կառուցվածքային միավոր պարունակող նյութի քիմիական քանակն է

9 **Ո՞րն է հիմնական վիճակում գտնվող ածխածնի ատոմի էլեկտրոնային բանաձևը.**

1) $1s^22s^22p^2$
2) $1s^22s^22p^4$
3) $1s^22s^22p^3$
4) $1s^22s^22p^1$

10 **Ինչպե՞ս են անվանում թթվածինն քիմիական տարրի ալոտրոպ ձևափոխությունը.**

1) օզոն
2) արգոն
3) ազոտ
4) գրաֆիտ

11 Հետևյալներից ո՞րը հիմնային օքսիդի *բանաձև չէ.*

1) Na_2O
2) Al_2O_3
3) CO_2
4) CuO

12 Ո՞ր միացության մոլեկուլում է առկա կովալենտային բևեռային կապ.

1) $NaCl$
2) H_2O
3) Br_2
4) H_2

13 Ո՞ր շարք են բերված թթվի, թթվային օքսիդի և թթու աղի բանաձևերը.

1) HCl, CuO, PbS
2) H_2SO_4, CO, $BaCl_2$
3) H_2S, SO_2, $NaHSO_3$
4) H_2SO_4, NO_2, PbS

14 Ո՞ր շարքում են նշված $...Na + ...Cl_2 = ...NaCl$ ռեակցիայի հավասարման գործակիցները.

1) 2, 3, 2
2) 4, 5, 2
3) 2, 5, 4
4) 2, 1, 2

15 Ո՞ր մետաղն են բնության մեջ հանդիպում միայն պարզ նյութի ձևով.

1) ոսկին
2) երկաթը
3) կալիումը
4) ալյումինը

16 **Համապատասխանեցնել ռեակցիաների տեսակները և օրինակները:**

ա) միացման
բ) քայքայման
գ) տեղակալման

1) $2Al + 3Cl_2 = 2AlCl_3$
2) $Ba(OH)_2 + H_2SO_4 = BaSO_4 + 2H_2O$
3) $2Cu(NO_3)_2 = 2CuO + 4NO_2 + O_2$
4) $Fe + H_2SO_4 = FeSO_4 + H_2$

Ո՞րն է ճիշտ պատասխանների շարքը.

1) ա2, բ4, գ4
2) ա1, բ2, գ3
3) ա4, բ1, գ2
4) ա1, բ3, գ4

17 **Ո՞ր պնդում(ներ)ն է(են) ճիշտ թթվածնի վերաբերյալ.**

ա) օդի հիմնական բաղադրիչներից մեկն է
բ) ծանր է օդից

1) ճիշտ է «ա » -ն
2) ճիշտ է «բ»- ն
3) երկուսն էլ ճիշտ են
4) երկուսն էլ սխալ են

18 **Հայտնի թեթև գազերից մեկը բնութագրվում է բավականին բարձր այրման տեսակարար ջերմությամբ, որի շնորհիվ հրթիռային տեխնիկայում կիրառվում է որպես վառելանյութ: Ո՞րն է այդ գազը.**

1) մեթան
2) հելիում
3) ամոնիակ
4) ջրածին

19 **Երկրի վրա հաստատված ջերմային հաշվեկշի խախտումը ստացել է «ջերմոցային երևույթ» անունը և պայմանավորված է օդում պարունակվող մեծ քանակությամբ.**

1) ազոտով
2) թթվածնով
3) ածխաթթու գազով
4) ջրային գոլորշիներով

20 **Քանի՞ գրամ աղ և ջուր պետք է վերցնել 15% զանգվածային բաժնով 200գ լուծույթ ստանալու համար.**

1) 15գ աղ, 185գ ջուր
2) 15գ աղ, 85գ ջուր
3) 30գ աղ, 170գ ջուր
4) 15գ աղ, 170գ ջուր